Կարգապահական գործ թիվ ԿԳ-25072

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԼԵՎՈՆ ՊԱՐԳԵՎԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՆՏԱՆՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Գուրգեն Թորոսյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Արմինե Եփրեմյանի և փաստաբան Արսեն Անտանոսյանի,

քննության առնելով փաստաբաններ Լևոն Պարգևի Օհանյանին (արտոնագիր՝ թիվ 1551) և Արսեն Հովհաննեսի Անտանոսյանին (արտոնագիր՝ թիվ 3564) **(այսուհետև նաև՝ Փաստաբաններ կամ Պատասխանողներ)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արմինե Եփրեմյանը **(այսուհետև՝ Դիմող),** դիմելով Պալատ, հայտնել է, որ «Օհանյան և գործընկերներ» ՍՊԸ-ի **(այսուհետև՝ Ընկերություն)** տնօրեն-փաստաբան Լևոն Օհանյանի հետ 17.06.2024 թվականին կնքել է թիվ 1706/06/24 պայմանագիրը **(այսուհետև՝ Պայմանագիր)**, որով Դիմողի հանձնարարությամբ իրեն պետք է մատուցվեին փաստաբանական ծառայություններ Անդրուշ Գարեգինի Եփրեմյանի և Նունիկ Միլիտոսի Հակոբյանի ժառանգական գործի շրջանակներում:

Դիմողի պնդմամբ, ինքը հանձնարարությունը տվել է միայն փաստաբան Լևոն Օհանյանին, սակայն առանց իր գիտության գործով ներգրավվել է նաև Արսեն Հովհաննեսի Անտանոսյանը, ով փաստաբանի արտոնագիր դեռևս չի ունեցել և փորձառու մասնագետ չի եղել:

Դիմողը հավելել է նաև, որ թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացված հայցադիմումը 02.04.2025 թվականի վճռով մերժվել է, իսկ

Թիվ ԿԳ-25072-2-Ա
10.09.2025թ.

դրանում Դատարանը արձանագրել է, որ «***հայցվորի ներկայացուցիչը դիրքորոշմանը կից ներկայացված փաստաթղթերը և վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդությունը դատարան է ներկայացրել դատարանի 27.01.2025 թվականի*** *ապացուցման պարտականությունը* ***բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետից ուշ և չի ներկայացրել*** *դատարանի սահմանած* ***ժամկետում տվյալ ապացույցը*** *կամ* ***միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը իրենից անկախ պատճառներով հիմնավորող որեւէ ապացույց, չի ներկայացվել*** *նաև միջնորդություն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին* ***որոշմամբ սահմանված ժամկետը փոփոխելու և այն երկարացնելու վերաբերյալ****, ուստի Դատարանը չի անդրադարձել նշված փաստաթղթերին և միջնորդությանը:*»:

Դիմողի պնդմամբ, ինքը մշտապես կապի մեջ է եղել փաստաբանների հետ և նրանց տրամադրել անհրաժեշտ ապացույցները, սակայն ապրիլ ամսին փաստաբանները սկսել են չպատասխանել իր զանգերին ու հաղորդագրություններին, իսկ գործով 02.04.2025 թվականի վճիռը տրամադրել են փաստացի ապրիլի 16-17-ին:

Դիմողը նշել է, որ 28.04.2025 թվականի գրությամբ հրաժարվել է փաստաբանների ծառայություններից և դադարեցրել է լիազորագրի գործողությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբաններ Լևոն Օհանյանին և Արսեն Անտանոսյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 21.07.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 04.08.2025 թվականին ներկայացրել է բացատրություն, նշելով, որ ուղարկել է Փաստաբաններին վկաների ցուցակն այն ժամանակ, երբ նրանք պահանջել են՝ 21.02.2025 թվականին:

Դիմողը կից ներկայացրել է նաև «WhatsApp» հավելվածի միջոցով Փաստաբանների հետ իրականացված նամակագրություն:

2. <u>Պատասխանողների համառոտ բացատրությունները</u>.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբաններ Լևոն Օհանյանին և Արսեն Անտանոսյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Արմինե Եփրեմյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանները 29.05.2025 թվականի համատեղ բացատրությամբ հատնել են, որ Ընկերության և Դիմողի միջև կնքվել է պայմանագիր, որով Ընկերությունը պարտավորվել է Անդրուշ Գարեգինի Եփրեմյանի և Նունիկ Միլիտոսի Հակոբյանի ժառանգական գործի շրջանակներում Դիմողի առաջարկով մատուցել փաստաբանական ծառայություններ:

Փաստաբանները մեջբերել են Պայմանագրի դրույթները նշել են, որ դրանում առկա է եղել 4.3.3 ենթակետը, որով Դիմողը տվել է համաձայնությունը ծառայությունների մատուցմանը Ընկերության աշխատակիցներին ներգրավելու համար:

Փաստաբանները հայտնել են 17.06.2024 թվականին Դիմողն իրենց տվել է լիազորագիր, ինչից հետո 24.09.2024 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացրել են

հայցադիմում՝ *Արմինե Գարեգինի Եփրեմյանին փաստացի տիրապետման հիմքով Անդրուշ Գարեգինի Եփրեմյանին և Նունիկ/Նինա Միլիտոսի Հակոբյանին պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի, Ծ.Իսակովի փող. տուն 11 հասցեում գտնվող բնակելի տուն հասցեում գտնվող ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին*, որն ընդունվել է վարույթ:

Փաստաբանները հայտնել են, որ Դատարանը 27.01.2025 թվականի որոշմամբ բաշխել է ապացուցման պարտականությունը և ապացույցներ ու դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետ է սահմանել մինչև 24.02.2024 թվականը, նույն օրը նշանակելով դատական նիստ:

Փաստաբանների պնդմամբ, Դիմողն ապացույցներն ուղարկել է 21.02.2025 թվականին «WhatsApp» էլեկտրոնային հավելվածի միջոցով, իսկ բնօրինակները հանձնվել են նիստից մի քանի ժամ առաջ:

Փաստաբանները հավելել են, որ մշտապես կապի մեջ են եղել Դիմողի հետ, կազմակերպել են հանդիպումներ՝ քննարկելով հետագա անելիքները, սակայն հետագայում 28.04.2025 թվականին Դիմողը հրաժարվել է իրենց ծառայություններից:

Փաստաբանները խնդրել են մերժել Դիմողի հաղորդման հիման վրա կարգապահական վարույթի հարուցումը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 21.07.2025 թվականին Փաստաբաններին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Փաստաբանները 01.08.2025 թվականի բացատրությանը կից ներկայացրել են մի շարք ապացույցներ՝ Դատարանի թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործով 27.01.2025 թվականին կայացրած «Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին» որոշումը, Արմինե Եփրեմյանի կողմից ապացույցները «WhatsApp» էլեկտրոնային հավելվածի միջոցով 21.02.2025 թվականին փաստաբան Ա. Աբտառոսյանին ուղարկելու վերաբերյալ ապացույցը, Դատարան ներկայացված ապացույց ներկայացնելու, վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդությունները, ինչպես նաև դրանք՝ կից նյութերով գործով պատասխանողին ուղարկելու վերաբերյալ ապացույցները:

Միաժամանակ, Փաստաբանները ներկայացրել են «WhatsApp» հավելվածի արտատպումներ, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, ինչպես նաև նախնական դատական նիստ հրավիրելու մասին որոշումը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 30.05.2025թ. թիվ 173-Ա/ԿԳ-25072 որոշմամբ փաստաբաններ Լևոն Պարգևի Օհանյանի և Արսեն Հովհաննեսի Անտանոսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2 և 3.5.5 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

06.06.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 06.08.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5–րդ գլխի 1-7-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 10.09.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Լևոն Օհանյանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ Անդրուշ Գարեգինի Եփրեմյանի և Նունիկ Միլիտոսի Հակոբյանի ժառանգական գործի շրջանակներում Դիմողի առաջարկով մատուցել փաստաբանական ծառայություններ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանների բացատրություններով, 17.06.2024 թվականի Պայմանագրով, Փաստաբաններին 17.06.2024 թվականին տրված լիազորագրով, ինչպես նաև թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

2. Դիմողի կողմից տրված հանձնարարության շրջանակներում փաստաբան Լևոն Օհանյանը թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործով ներկայացրել հայցադիմում՝ *Արմինե Գարեգինի Եփրեմյանին փաստացի տիրապետման հիմքով Անդրուշ Գարեգինի Եփրեմյանին և Նունիկ/Նինա Միլիտոսի Հակոբյանին պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի, Ծ.Իսակովի փող. տուն 11 հասցեում գտնվող բնակելի տուն հասցեում գտնվող ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու* պահանջի մասին: ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

3. Թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործով Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ստանձնել և ներկայացրել է նաև փաստաբան Արսեն Մնատանյանը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանների բացատրություններով:*

4. Թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործով Դատարանը **27.01.2025 թվականի որոշմամբ** բաշխել է ապացուցման պարտականությունը՝ այն ամբողջությամբ դնելով

Դիմողի վրա, իսկ ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետ սահմանել է մինչև հաջորդ դատական նիստը ներառյալ՝ **24.02.2025 թվականը**: ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ԱՐԴ/0932/02/24 - քաղաքացիական գործով Դատարանի 27.01.2025 թվականի որոշմամբ:*

5. Դիմողը 21.02.2025 թվականին «WhatsApp» էլեկտրոնային հավելվածի միջոցով ուղարկել է որոշ ապացույցներ փաստաբան Արսեն Անտանոսյանին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանների բացատրությամբ, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև «WhatsApp» էլեկտրոնային հավելվածի միջոցով 21.02.2025 թվականին իրականացված նամակագրությամբ:*

6. Թիվ ԱՐԴ/0932/02/6 քաղաքացիական գործով փաստաբան Արսեն Անտանոսյանը **19.03.2025 թվականին ներկայացրել է դիրքորոշում՝ կցելով մի շարք ապացույցներ, ինչպես նաև միջնորդություն՝ վկա հրավիրելու** մասին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Փաստաբանների բացատրությամբ, «առմլեքս» էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգի միջոցով 19.03.2025 թվականին միջնորդությունները ներկայացնելու վերաբերյալ քաղվածքներով, ինչպես նաև քաղաքացիական գործով պատասխանողին նշված դիրքորոշումն ուղարկելու փաստը հավաստող թիվ PCO27100574AM փոստային անդորրագրով:*

7. Դատարանի 02.04.2025 թվականի վճռով Դիմողի հայցը մերժվել է և դրանում արձանագրվել է, որ «***հայցվորի ներկայացուցիչը դիրքորոշմանը կից ներկայացված փաստաթղթերը և վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդությունը դատարան է ներկայացրել դատարանի 27.01.2025 թվականի*** *ապացուցման պարտականությունը* ***բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետից ուշ և չի ներկայացրել*** *դատարանի սահմանած* ***ժամկետում տվյալ ապացույցը*** *կամ* ***միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը իրենից անկախ պատճառներով հիմնավորող որեւէ ապացույց, չի ներկայացվել*** *նաև միջնորդություն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին* ***որոշմամբ սահմանված ժամկետը փոփոխելու և այն երկարացնելու վերաբերյալ,*** *ուստի Դատարանը չի անդրադարձել նշված փաստաթղթերին և միջնորդությանը:»:* ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործով Դատարանը 27.01.2025 թվականի վճռով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝

Լևոն Օհանյանը փաստաբան է հանդիսանում 14.07.2012 թվականից և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ,

Արսեն Անտանոսյանը փաստաբան է հանդիսանում 04.07.2024 թվականից և 2024-2025թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբաններ Լևոն Պարգևի Օհանյանը և Արսեն Հովհաննեսի Անտանոսյանն ենթակա են կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի **2.7.2 և 3.5.5 ենթակետերի** խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում հանձնապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում

առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Փաստաբաններին վերագրվել է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***արդյո՞ք Փաստաբանները բարեխիղճ իրավական օգնություն են ցուցաբերել Դիմողին,***
- ***արդյո՞ք Փաստաբանները ձեռնարկել են ողջամիտ ջանքեր իրենց վստահորդների հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար:***

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները մեջբերված նորմերի ու հիմնավորումներին, ինչպես նաև անդրադառնալով դրանց վերը ներկայացված հարցադրումների համատեքստում, Հանձնաժողովն արձանագրել է, որ Դիմողի և Ընկերության՝ ի դեմս տնօրեն-փաստաբան Լևոն Օհանյանի, միջև 17.06.2024 թվականին կնքվել է Պայմանագիր, որով Ընկերությունը պարտավորվել է Անդրուշ Գարեգինի Եփրեմյանի և Նունիկ Միլիտոսի Հակոբյանի ժառանգական գործի շրջանակներում Դիմողի առաջարկով մատուցել փաստաբանական ծառայություններ: Դիմողը 17.06.2024 թվականի լիազորագրով լիազորել է փաստաբան Լևոն Օհանյանին և Արսեն Անտանոսյանին, ով այդ պահին փաստաբանական գործունեության չի ունեցել և այն փաստացի ստացել է 04.07.2024 թվականին:

Դիմողի կողմից տրված հանձնարարության շրջանակներում փաստաբան Լևոն Օհանյանը թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործով ներկայացրել հայցադիմում՝ *Արմինե Գարեգինի Եփրեմյանին փաստացի փիրապետման հիմքով Անդրուշ Գարեգինի Եփրեմյանին և Նունիկ/Նինա Միլիտոսի Հակոբյանին պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի, Ծ.Իսակովի փող. տուն 11 հասցեում գտնվող բնակելի տուն հասցեում գտնվող ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու* պահանջի մասին:

Հետագայում նշված գործով, «Էլեկտրոնային դատավարություն» համակարգի միջոցով, որպես հայցվորի ներկայացուցիչ ներգրավել և դատարանում Դիմողի շահերը ներկայացրել է նաև փաստաբան Արսեն Անտանոսյանը:

Նշված գործով 02.04.2025 թվականի վճռով Դիմողի հայցը մերժվել, իսկ վճռով Դատարանը արձանագրել, որ «***հայցվորի ներկայացուցիչը դիրքորոշմանը կից ներկայացված փաստաթղթերը և վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդությունը դատարան է ներկայացրել դատարանի 27.01.2025 թվականի*** *ապացուցման*

պարտականությունը ***բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետից ուշ և չի ներկայացրել*** *դատարանի սահմանած* ***ժամկետում տվյալ ապացույցը*** *կամ* ***միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը իրենից անկախ պատճառներով հիմնավորող որեւէ ապացույց, չի ներկայացվել*** *նաև միջնորդություն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին* ***որոշմամբ սահմանված ժամկետը փոփոխելու և այն երկարացնելու վերաբերյալ****, ուստի Դատարանը չի անդրադարձել նշված փաստաթղթերին և միջնորդությանը:»:*

Դիմողը 28.04.2025 թվականի գրությամբ հրաժարվել է փաստաբանների ծառայություններից և դադարեցրել է լիազորագրի գործողությունը:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում են նաև մի շարք այլ պարտականություններ, որոնց շարքում առանձնակի նշանակություն ունի բարձր մասնագիտական պատրաստվածությունը և անհրաժեշտ գործնական փորձի առկայությունը, որի հետ էլ փոխկապակցված է վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականության պատշաճ կատարումը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը,

որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Համադրելով վերը ներկայացված նորմերը և հիմնավորումները գործի փաստական հանգամանքներին, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանները ստանձնելով Դիմողի շահերի պաշտպանությունը փաստացի հետամուտ են եղել վերջինիս կողմից տրված հանձնարարության կատարմանը թիվ ԱՐԴ/0932/02/24 քաղաքացիական գործով շրջանակներում:

Ըստ այդմ, քաղաքացիական գործով Դատարանի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետ է սահմանել՝ մինչև հաջորդ դատական նիստը ներառյալ՝ 24.02.2025 թվականը:

Այս կապակցությամբ, Դիմողը 21.02.2025 թվականին «WhatsApp» էլեկտրոնային հավելվածի միջոցով ուղարկել է որոշ ապացույցներ փաստաբան Արսեն Անտանոսյանի, որոնց հաշվառմամբ վերջինս ներկայացրել է դիրքորոշում կցելով մի շարք ապացույցներ, ինչպես նաև միջնորդություն՝ վկա հրավիրելու մասին 19.03.2025 թվականին՝ փաստացի Դատարանի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետից խախտմամբ, որպիսի փաստը արձանագրվել է նաև Դատարանի 02.04.2025 թվականի վճռով:

Առկա պայմաններում, անդրադառնալով Փաստաբաններից յուրաքանչյուրի վարքագծին անդրադառնալով առանձին-առանձին, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ Դիմողի կողմից տրված լիազորագիրը տրված է եղել փաստաբան Լևոն Օհանյանին և Արսեն Անտանոսյանին, ով փաստացի փաստաբանի գործունեության արտոնագիր է ստացել և ներգրավվել քաղաքացիական գործով ավելի ուշ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողի հանձնարարության կատարումը պետք է ապահովվեր առաջին հերթին Ընկերության տնօրեն-փաստաբան Լևոն Օհանյանը, իսկ այնուհետև՝ փաստաբանի կարգավիճակ ձեռք բերելու և քաղաքացիական գործով ներգրավվելու պահից՝ փաստաբան Արսեն Անտանոսյանը, հետևապես, նրանցից յուրաքանչյուրը պետք է Դիմողին ցուցաբերեր բարեխիղճ իրավական օգնություն՝ ձեռնարկելով ողջամիտ ջանքեր՝ դատավարության շրջանակներում առնվազն պատշաճ ու ժամանակին գործողություններ կատարելու համար:

Այլ կերպ ասած այն հանգամանքը, որ փաստաբան Լևոն Օհանյանը միայն ներկայացրել է հայցադիմումը Դատարան, Պայմանագրի ու լիազորագրի առկայության պայմաններում, ինքնին չի բացառում դատավարության ընթացքում հետագա գործողությունների կատարման ապահովման անհրաժեշտությունը կամ դրանց կատարմանը հետևողական լինելը:

Հատկանշական է, որ քննարկման առարկա վարքագիծը փաստացի ծագել է այն դեպքում, երբ փաստաբան Արսեն Անտանոսյանը ներկայացրել է ապացույցները և վկա հրավիրելու մասին միջնորդությունը սահմանված ժամկետից հետո և չի միջնորդել բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին, չի ներկայացվել դատարանի սահմանված ժամկետում տվյալ ապացույցը կամ միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը իրենից անկախ պատճառներով հիմնավորող որևէ ապացույց, չի ներկայացվել նաև միջնորդություն ապացուցման պարտականությունը

բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետը փոփոխելու և այն երկարացնելու վերաբերյալ:

Ստացվում է, որ մի դեպքում՝ փաստաբան Լևոն Օհանյանը որևէ գործողություն չի ձեռնարկել քաղաքացիական գործի ընթացքում Դիմողի շահերի պաշտպանելու ուղղությամբ, իսկ մյուս դեպքում՝ փաստաբան Արսեն Անտանոսյանի կողմից ձեռնարկված գործողությունները եղել են ժամանակավրեպ, որպիսի պայմաններում չի ապահովվել Դիմողի շահերի արդյունավետ պաշտպանությունը առնվազն Փաստաբանների կողմից ողջամիտ ջանքերի ձեռնարկման տեսանկյունից:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանների կողմից ներկայացրած բացատրություններն և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի

կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողների վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողների անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում Փաստաբանները տեղյակ էին Դատարանի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված վերջնաժամկետի մասին, փաստացի ստացել էին Դիմողի կողմից տրամադրված ապացույցները այն պահին, երբ ապացույցների ու միջնորդությունների ներկայացման ժամկետը լրացած չէր, սակայն այդ պայմաններում փաստացի ներկայացնելով դրանք 23 օր անց:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանների կողմից Դիմողի շահերի ու իրավունքների պաշտպանություն ապահովմանն ուղղված գործողությունները փաստացի ժամանակավրեպ կատարելու արդյունքում այն

Դատարանի կողմից չեն ընդունվել ներկայացված ապացույցները, ինչպես նաև չի քննարկվել վկա հրավիրելու մասին միջնորդությունը, որպիսի հանգամանքով պայմանավորված ստացվել է, որ Դիմողը, որպես հայցվոր զրկվել է դատավարական արդյունավետ իրավունքի իրացման հնարավորությունից:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում՝ Փաստաբանների անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում վերջիններիս մոտ կարգապահական տույժերի բացակայության փաստը, ինչից ելնելով նրանց նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «խիստ նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբաններ Լևոն Պարգևի Օհանյանի (արտոնագիր՝ թիվ 1551) և Արսեն Հովհաննեսի Անտանոսյանի (արտոնագիր՝ թիվ 3564) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ «պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն»՝ 6 ամսվա ընթացքում 4 ակադեմիական ժամ ժամաքանակով «Դեոնթոլոգիա» թեմայով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25072-2-Ա
10 սեպտեմբերի 2025թ.
ք.Երևան